ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ ինքնուրույնության,նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում»

ԱՌԱՐԿԱ՝ մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարինե Բաբայան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ախլաթյանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննիսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն……2
Ներածություն ……..…….3
Գլուխ 1. Սովորողների մեջ ինքնուրույնության,նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի զարգացման ընթացքում……..5
1.1 Աշակերտների ինքնուրույնությունն իբրև անձի ձևավորման խթան……..5
1.2 Ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը՝ որպես սովորողի առաջադիմության ու մոտիվացիայի աղբյուր……..7
1.3 Գործնական համատեքստ……....9
Գլուխ 2. Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում……..…14
2.1Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմանները……14
2.2Ստեղծագործական պատկերների բանավոր վերարտադրում……15
Օրվա դասի պլան 1……17
Օրվա դասի պլան 2……20
Օրվա դասի պլան 3……23
Եզրակացություն……25
Օգտագործված գրականության ցանկ……..…..26

Վատ ուսուցիչը մատուցում է
ճշմարտությունը,լավը
սովորեցնում է դա գտնել:
Ա. Դիստերվեգ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ցածր (տարրական) դասարաններում առավել կարևոր է սովորողների մեջ ինքնուրություն հաստատելը:Եթե տարրական դասարաններից սկսած ուսուցիչը (դաստեկը) երեխաներին սովորեցնում է ինքնուրույն լինել, ապա այդ կարողությունը դառնում է նրանց սեփականությունն ամբողջ կյանքի ընթացքում:

Դպրոցական տարիքի երեխաների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծերից,ծնողներից և ուսուցիչներից:Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց:

Ինքնուրույնությունը, ըստ գիտնականների կարևոր բաղադրիչ է,անձի զարգացման և կայացման հարցում:Մարդը, համարվում է հասուն անհատ այն ժամանակ, երբ նա կայացնում է որոշումները ինքնուրույն,ինքնուրույն է իր արարքների և գործունեության մեջ:

Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման և զարգացման մեջ հսկայական է ուսուցչի դերը:Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դասից դաս, դասարանից դասարան:

Ուսուցիչը պետք է հասկանա,որ իր անմիջական ներգործությունն ու ուղղորդումը առանցքային նշանակություն ունեն դպրոցական տարիքի սովորողների բնականոն զարգացման, արժեհամակարգի ձևավորման ու ուսումնառության ընթացքում առաջադիմություն ունենալու առումով:

Արդյունքում կհասնենք նրան, որ կունենանք ինքնուրույն մտածող ու գործող,կրթության և կյանքի այլ ասպետներում նախաձեռնող, կյանքի իրողություններում ստեղծագործաբար մոտեցող սերունդ:

Ուսուցիչը իր համար պետք է հստակեցնի տարբերակված ինքնուրույն աշխատանքի նպատակը, որպեսզի յուրաքանչյուր աշակերտի աշխատանքը լինի առավել արդյունավետ՝ դասի ժամանակ և տանը:Կարևոր է ,որ հաշվի առնի յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը կախված է ժամանակի նոր մարտահրավերների, կրթական կարիքների բավարարմամբ:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ ուսուցչի և սովորողի փոխգործության դերը վերջինիս մոտ մի շարք կենսական նշանակության գիտելիքների ու հմտությունների

զարգացման գործում:

Հետազոտական նյութի խնդիրը: Կարևորել աշակերտակենտրոն ուսուցման դերը կրթական համակարգում՝ որպես նախաձեռնության, ինքնուրույնության և ստեղծագործական զարգացման հիմք: Ցույց տալ սովորողի առանձնահատկությունները և բացահայտումը՝ ինքնուրույնության միջոցով:

Գլուխ 1 Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում:

1.1 Աշակերտների ինքնուրույնությունն իբրև անձի ձևավորման խթան

Ինչպես այժմյա բոլոր ոլորտներում, կրթական ոլորտում ևս նկատվում է զարգացում և բարգավաճում: Եվ անհրաժեշտ է սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնությունը: Ինքնուրույնությունը, սեփական կյանքը կազմակերպելու և իր զարգացման ուղին ընտրելու մարդու ունակությունն է:[1]

Ինքնուրույնության ձևավորման կարևոր նախապայմաններից մեկը ազատությունն է: Որպեսզի սովորողի մոտ զարգանա ինքնուրույնությունը, և նա սկսի մտածել և գործել իր իսկ սեփական մտքով, անհրաժեշտ է թույլ տալ երեխային գործել և մտածել սեփական մտքի և կարողությունների սահմաններում:Նման դեպքում սովորողը հասկանում և ընդունում է, որ կարող է իր միտքը ևս ճիշտ լինել և առավել շատ է սկսում գործել ինքնուրույն:

Երեխայի ինքնուրույն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, աշակերտներին անհրաժեշտ է սովորեցնել աշխատել ինքնուրույն:[2]

Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ՝

- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացմանը:
- Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների տարբեր տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

[1] Անձի ինքնիրացման հիմնախնդիրը:Ուսումնական ձեռնարկ (Վ.Ռ. Պապոյան, Է.Ա.Գրին, Ա.Ս. Գալստյան և ուրիշներ).-Եր. ԵՊՀ հր. 2011. 102 էջ

[2] Հոգեդիագնոստիկա;ուսումնական ձեռնարկ/ԵՊՀ;Կազմ.Ռ.Ստեփանյան,Ա.Գալստյան.-Եր;ԵՊՀ հրատ 2012,210 էջ

- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքի անցկացման արդյունքում ձեռք են բերում խորը և հիմնավոր գիտելիքներ:

Ինքնուրույնության բարձր մակարդակը ցույց է տալիս մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը և հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը:

Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն ինքնուսուցման գործընթացի վերածելը:

Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխայի կամքը և վարքը:

Կրտսեր դպրոցական տարիքի սովորողը սովորաբար ունենում է դրական տրամադրվածություն շրջապատի և իրականության հանդեպ:Այս տարիքում երեխան, որպես կանոն, արդեն ունենում է սեփական կարծիք սակայն մեծի հեղինակությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ այդ կարծիքի ձևավորման և զարգացման վրա:

Եթե ուսուցիչը կամ ծնողը մի քանի անգամ չհարցնեն կամ չլսեն և չհարգեն սովորողի կարծիքը, ապա նա կսկսի քիչ արտահայտել կամ ընդանրապես չարտահայտի սեփական կարծիքը:

Ըստ Ս. Օժեգովի բառարանի, «ինքնուրույն» հասկացությունը ունի մի քանի սահմաններ.

- Ազատ,անկախ
- Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն
- Մյուսներից առանձնացված
- Կողմնակի ազդեցություններից անկախ:[3]

[3] https://slovarozhegova.ru/

1.2 Ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը՝ որպես սովորողի առաջադիմության ու մոտիվացիայի բարձրացման ձև:

Այսօրվա կրթական համակարգը, բացի ավանդական կրթական մեթոդները պահանջում է,որ լայնորեն կիրառվի ժամանակակից մեթոդներ՝ նպատակ ունենալով զարգացնել աշակերտի մոտ մի շարք կարողունակություններ, որոնք առաջնային դեր ունեն այժմյա աշխարհում:Ուսուցման աշակերտակենտրոն այս համակարգը ունակ է սովորողի մոտ ձևավորել հաղորդակցվելու, շփվելու,սեփական կարծիք ձևավորելու և արտահայտելու , ցանկացած իրավիճակում կողմնորոշվելու և որոշում կայացնելու կարողությունները:

Պետք է կարևորել նաև այն փաստը, որ սովորողը իր ստացած բուն գիտելիքը զուգահեռաբար պետք է կարողանա իրացնել գործնականում:

Պակաս կարևոր չէ նաև մարդու ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են որոշման կայացումը, ներքին ազատությունը, կայացման ձգտումը և այլն:

Ուսուցիչ դառնալու համար մարդը պետք է ունենա անձնային և հետո միայն մասնագիտական բարձր բարձր որակներ:Ուսուցչի մասնագիտական որակներ են համարվում.

- Հանդուրժողականությունը, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողությունը;
- Քննադատական մտածելակերպը, ճշգրտելու և կատարելագործելու ցանկությունը և կարողությունը;
- Դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակից լինելու պատրաստակամությունը;
- Նորը զգալու և ընկալելու կարողություն,գենդերային անկողմնակալություն
- Սովորողի իրավունքների պաշտպանի,երեխայի համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն;
- Կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն:[4]

Այսպիսով , կարող ենք արձանագրել,որ ցանկացած կրթական բարեփոխում անհնար է իրականացնել առանց ուսուցչի մասնակցության:Կթության և դրա որակի բարձրացման, սովորողի մեջ առաջնային կրողությունների ձևավորման համար կարևորվում է կրթությանբովանդակությունը: Կրթության բովանդակությունը

[4] Ա. Թոփուզյան,Մանկավարժական միտք,2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»,էջ 13

նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջությունն է, որի մեջ ամփոփված է «ի՞նչ ենք սովորեցնում» հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա աշխատողին:[5]

Մինչին դպրոցահասակ սովորողի մոտ ինքնուրույնության զարգացման համար կարևոր է վեջինիս բնականոն ու կառուցողական սոցիալականացումը:Այդ ակտիվությունը կապված է այն բանի հետ, երբ անձի հետաքրքրությունները դառնում է ակտիվ գործելու պատճառ, երբ նրա աշխարհաճանաչման ձգտումներն ու նպատակադրումները ուղղվում են իրականության փոփոխմանը:

Անձի կամ անհատի ակտիվության հիմնական պատճառն այն է, որ հակասություններ են ստեղծվում նրա կենսապայմանների ու օբյեկտիվ պահանջմունքների միջև, և նա ակտիվանում է այդ անհամապատասխանությունը ակտիվացնելու համար:[6]

Պատվոգիրը, շնորհակալագիրը, անգամ բարձր գնահատականը, հաճախ ստիպում են սովորողին վերանայել սեփական վարքը ու ավելի մոտիվացված առաջ շարժվել:Ուսուցիչը պետք է իրազեկված լինի օրենքով սահմանված իր պարտավորություններին և կատարի դրանք, որոնցից այս համատեքստում կառանձնացնենք հետևյալը՝ «Ուսուցիչը պետք է սովորողների մեջ զարգացնի ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ»:[7]

---

[5] https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf. Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013, էջ 13

[6] http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/Arzumanyan.pdf. Ս. Արզումանյան,Հոգեբանություն,Երևան,2003,էջ 65

[7] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 ՀՀ հանրակրթության մասին օրենք; հոդված 27, կետ 10

1.3 Գործնական համատեքստ

Ուսուցչի աշխատանքի և աշակերտների կրթական/ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում է ձեռք բերած գիտելիքներով ու հմտություններով:Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է դառնում աշակերտների կրեատիվության, նրանց ստեղծագործական մտածողության,ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:[8]

Կրթական գործընթացում կրտսեր դպրոցականի ինքնուրույնությանը և նախաձեռնողականությանը նպաստելու համար անհրաժեշտ է սովորողին հնարավորություն տալ ինքնուրույն մտածել և արտահայտել սեփական տեսակետը որևէ հարցի շուրջ:

Բազմաթիվ գիտնականներ, մանկավարժներ և հոգեբաններ խոսել են երեխաների խաղային գործունեության անհրաժեշտ լինելու մասին նրանց բոլորի կարծիքով, խաղերի միջոցով երեխային կարելի է, և՛ կրթել, և՛ դաստիարակել:Խաղի միջոցով տարրական և կրտսեր դպրոցի սովորողները նյութը ընկալում են ավելի դյուրին:Խաղ միջոցով փոխանցվող նյութը հանրամատչելի է:

Դիդակտիկ խաղերին սովորողների մասնակցությունը նպաստում է նրանց ինքնադրսևորմանը, ինքնահաստատմանը, տարբեր պատճառներով պայմանավորված՝ դրանք ձևավորում են հաջողության և հաղթանակին հասնելու կամային որակներ և կայուն ձգտումներ:

Ստորև կներկայացնեմ դիդակտիկ խաղերի մի քանի նմուշներ,որոնք ինքս կիրառում եմ՝ վերը նշված նպատակներով:

1-ին խաղի անվանումը ՝ ***«Սև և սպիտակ»***

Խաղի նպատակը-Ամրապնդել բաղաձայն և ձայնավոր հնչյունների մասին սովորողների ունեցած կարողություններն ու գիտելիքները: Երեխաների մեջ ամրապնդել ազդանշաններն ընկալելու և դրանցով ղեկավարելու կարողությունները:

Անհրաժեշտ պարագաները-Սև ու սպիտակ շրջանակներ՝ բռնակներով:

Խաղի ընթացքը-Երբ ուսուցիչը արտաբերում է ձայնավոր հնչյուններ, սովորողները բարձրացնում են սպիտակ շրջանակը, իսկ երբ արտաբերում է բաղաձայն հնչյուններ, սովորողները բարձրացնում են սև շրջանակը:

[8] https://lib.armedu.am/category/56

2-րդ խաղի անվանումը ***«Ով որտեղ է ապրում»***

Խաղի նպատակը- Ամրապնդել սովորողների գիտելիքները կենդանիների մասին , ցույց տալ , թե որ կենդանինորտեղ է բնակվում:

Անհրաժեշտ պարագաները: Սպիտակ թուղթ, կենդանիների նկարներ և համապատասխան բնակավայրերը:

Խաղի ընթացքը: Սովորողը մոտենում է պատին փակցված թղթին և մատիտի օգնությամբ միացնում է կենդանին իր բնակության վայրին (Խաղը կարելի է կազմակերպելիմբային տարբերակով):

Խաղի անվանումը՝ ***«Փոստատարը ի՞նչ նամակ բերեց»***

Խաղի նպատակը՝ հարստացնել երեխայի բառապաշարը, ձևավորել նրբանկատությունը, վերլուծելու և համեմատելու կարողությունները, զարգացնել երեխայի ստեղծագործական երևակայությունը:

Անհրաժեշտ պարագաները- փոստատարի արկղ կամ պարկ՝ մեջը լցված ծրարներով, որոնց մեջ դրված են նամակները(փոքրիկ թեմատիկ նկարներ):

Խաղի ընթացքը- Սովորողներից մեկը՝ պարկը ուսին (կամ արկղը ձեռքին) դուրս է գալիս դասասենյակից:Ուսուցիչը ներկայացնում է՝

-Երեխանե՛ր,այսօր Արամը մեր փոստատարն է:Տեսնենք,թե ու՞մ և ի՞նչ նամակ է բերելու:Բայց ինչպե՞ս պիտի ընթերցենք նամակը՝ նկարով (ծրարների մեջ կան նկարներ,որոնք պատմում են ինչ-որ մեկի,կամ ինչ-որ դեպքի մասին):

Որպես օրինակ,ուսուցիչը ինքն է վերցնում առաջին ծրարը,բացում և սկսում հորինել մի պատմություն՝ տվյալ նկարի շուրջ:Արամը, որպես փոստատար սկսում է բաժանել յուրաքանչյուր սովորողին մեկական ծրար:Աշակերտներից յուրաքանչյուրը նայելով նկարին սկսում են պատմել որևէ պատմություն՝ նկարի վերաբերյալ:

Խաղի անվանումը ***«Նկարի՛ր, ինչ կտեսնես»***

Խաղի նպատակը-զարկ տալ սովորողի ստեղծագործական մտքին, թույլ տալ երեխային զարգացնել իր մտավոր և ստեղծագործ կարողությունները:

Անհրաժեշտ պարագաները- փոքրիկ պատկերավոր հեքիաթներ. յուրաքանչյուր աշակերտին մեկական հեքիաթ,գունավոր մատիտներ և սպիտակ թղթեր: *Խաղի ընթացքը*-ուսուցիչը բացատրում է խաղի կանոնները.

-Կարդում եք փոքրիկ հեքիաթ-պատմությունը և նկարում այն,ինչ պատկերացնում եք տվյալ հեքիաթը կարդալիս:

Աշակերտները նկարում և գունավորում են այն, ինչ պատկերացնում են հեքիաթը կարդալիս:

Վերջում, որպես խրախուսանք աշակերտների նկարած և գունավորած նկարները ցուցադրվում են՝ դասասենյակի պատին ժամանակավոր փակցնելով:

*Խաղի անվանումը-**«Գտիր ճիշտը՝ կաղապարներով»***

Խաղի նպատակը-զարգացնել երեխայի մոտ երկրաչափական պատկերների իմացությունը:Զարգացնել տեսողական գիտելիքները:

Անհրաժեշտ պարագաները- թուղթ, կենդանիների նկարներ՝ յուրաքանչյուր կենդանու վրա թողնել երկրաչափական որևէ պատկերի տեսքով ազատ հատված, և առանձին այդ բաց թողնված կաղապարներից՝ համապատասխան կենդանու գունավորմամբ:

Խաղի ընթացքը- երեխաները մոտենում են գրատախտակին փակցված թղթին և ընտրելով համապատասխան երկրաչափական պատկերները տեղադրում են կենդանու վրա բաց թողնված կաղապարներում:

Փորձը ցույց է տալիս,որ կարելի է տարբերակել մի շարք խնդիրներ,որոնք միմյանց կապակցված են սովորողների ստեղծագործականության զարգացման հետ:Այդ խնդիրներն են.

- Բանավոր խոսքի զարգացում
- Ինքնաարտահայտվելու կարողության զարգացում
- Խնդրի պլանավորում և բաշխում
- Խրախուսում և գնահատում
- Համագործակցություն
- Գեղագիտական ճաշակի զարգացում
- Խնդրի պլանավորում և բաշխում

- Խրախուսում և գնահատում[9]

Գլուխ 2 Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում

2.1 Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմանները

Ինչպես տարիքային տարբեր փուլերում,այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում ինքնուրույնության համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու ակնկալիքները:

Մանկության տարիներին դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական արարքի և ընտրության համար:Սեփական անձի հետաքրքրությունների և ապագա մասնագիտության նոր ինքնորոշման քայլերը կարող են իրականանալ վաղ տարիքում:

Եթե մասնագիտությունների մասին պատկերացումները բավարար լինեն ինքնորոշման համար,ապա ուսումնական հաստատություններում սովորեղները կարող են ինքնուրույն կողմնորոշվել՝ որպես ապագա մասնագետ:

Տարբերվում են աշակերտների ինքնուրույնության չորս մակարդակ.

1. *Վերարտադրողական ինքնուրույնություն*

Այս մակարդակն ունեցող սովորողն վարժությունների կատարման ժամանակ կիրառում է ձեռքի տակ եղած օրինակի մեթոդը:

2. *Ընտրովի ինքնուրույնություն*

Այս մեթոդի ժամանակ սովորողը ընտրում և կիրառում է մի շարք օրինակներից մեկը:

3. *Մասնակի որոնողական ինքնուրույնություն*

Այս մակարդակի դեպքում սովորողը կարողանում է պլանավորել և կազմակերպել իր ինքնուրույն գործունեությունը, նա կիրառում է ընդհանրական կարողություններ,որոնք ձեռք է բերել այլ թեմաների ուսուցման ժամանակ:

4. *Ստեղծագործական-հետազոտական ինքնուրույնություն*

Այս մակարդակում սովորողը օգտագործում է իր իսկ սեփական ստեղծագործական և հետազոտական կարողությունները[10]

---

[9] Կ. Թորոսյան,Կ. Չիբուխչյան,Մ.Մանուկյան,Մեթոդական աշխատանքը դպրոցում,ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն,2014 թ

[10] Մասնագիտական ինքնորոշման և կայացման հոգեբանական ուղղորդումը կրթական համակարգում//նյութերի ժողովածու, հեղ. Վ. Պապոյան, Ա. Գալստյան, Ե.Մուրադյան, Դ. Սարգսյան// Եր. ԵՊՀ հրատ. 2015,76 էջ

2.2 Ստեղծագործական պատկերների բանավոր վերարտադրում

Ստեղծագործական ընթերցանության հնարի կիրառումը արդյունավետ է գեղարվեստական տեքստերի շուրջ աշխատանքի ընթացքում: Ստեղծագործական ընթերցանությունը բարձր գեղարվեստական ճաշակի ձևավորման հիմքն է:Բառերի գեղարվեստական հնարավորությունների վերհանման նպատակով սովորողները կատարում են ստեծագործական բնույթի առաջադրանքներ:Աշակերտները պետք է պատասխանեն առաջին հայացքից տարօրինակ թվացող մի քանի հարցերի. ի՞նչ տրամադրություն եմ ունենում, երբ լսում եմ գոռոց, աղմուկ, լաց բառերը. ի՞նչ եմ զգում, երբ լսում եմ ծով բառը:

Կարելի է կիրառել թատրոն էքսպորտ հնարը:Այս հնարը կարելի է կիրառել «Շաղգամ» հեքիաթի բամականացումից: Երեխաներին բաժանվում է հերոսների նկարներով դիմակներ և բաժանվում է դերերը:Բեմի ետնամասից կարդում են հեքիաթը, իսկ դերակատարները կատարում են այն, ինչ ազդարարվում է: Այս կերպ երեխաները սկսում են վստահել իրենց ուժերին և փորձում են ավելի լավ ներկայանալ հաջորդ ներկայացումների ժամանակ:

Հեքիաթները ներկայացվում են նաև խաղալիքների՝ մասնավորապես տիկնիկների միջոցով, այդ կերպ երեխան իր խաղով և խոսքով կենդանացնում է անկենդան խաղալիքը:

Հետաքրքիր և արդյունավետ է համարվում նաև դերերով ընթերցանությունը, որի ժամանակ, սովորողին հնարավորություն է ընձեռնվում հայտնվել հերոսի կարգավիճակում:

Դերերով ընթերցանությունը կարելի է կատարել բոլոր այն ստեղծագործությունների ընթացքում, որոնցում առկա է երկխոսություն:

Արդյունավետ է նաև հանցադիմումների մեթոդը:Ուսուցիչը նախօրոք կարող է կազմել հարցաթերթիկներ և բաժանել աշակերտներին: Դրանք կարող են ունենալ հետևյալ բովանդակությունը.

- Ի՞նչ հեքիաթի հերոսներ գիտեք
- Ի՞նչ հեքիաթներ եք նախընտրում կարդալ
- Ի՞նչ սովորեցիք այս հեքիաթի հերոսներից:

Այս դեպքում աշակերտները կաշխատեն զույգերով և կներկայացնեն իրենց գիտելիքները հեքիաթի մասին:

Ստեղծագործական ունակությունների զարգացման, ինքնուրույն խոսքի ձևավորմանը խթանող մի հնար է «գուշակություն» հնարը: Սովորողների հետաքրքրությունը խթանելու համար կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները գրել թերթիկների վրա,առանձին կտրատել բառերը և պահել: Դասի

սկսվելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրել ստանալ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքներ լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասի նյութը ու նմանություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև:[11]

[11] https://library.fes.de/pdf-files/buenos/georgien/16023.pdf. Ուսուցչի արդյունավետ հնարներ, Երևան,2020

Օրվա դասի պլան

Առարկան՝ Մայրենի

Դասարան՝ Չորրորդ

Դասագիրք՝ Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան

Թեմատիկ խումբ՝ «Մարդու անունն ու գործը»

Դասի թեման՝ «Կաթիլը»

Դասաժամ Երկու

Առաջին դասաժամ

Դասի տիպը՝ նոր նյութի ուսումնասիրման
Չափորոշչային պահանջ՝

- տարբերել արձակ և չափածո ստեղծագործությունները,
- սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցել տեքստը:

Դասի նպատակը՝ սովորողները կիմանան
Նոր տեղեկություններ ջրի մասին
Նոր բառեր, իմաստներ և հոմանիշներ
Կկարողանան՝

- Ձեռք բերել տեղեկատվական նոր նյութեր ջրի մասին
- Ձևակերպել դասի հիմնական միտքը
- Կզարգացնեն ստեղծագործական կարողությունները
- Աշխատել բնագրի շուրջ
- Կգնահատեն ջրի կարևորությունը և ավելի խորը կգիտակցեն ջրի արժեքը Երկիր մոլորակի վրա
- Կկարևորեն բարի գործ կատարելու, ուրիշներին՝ կաթիլի նման, օգտակար լինելու գաղափարը:

Դասի ընթացքը
Խթանման փուլ

Առաջադրում եմ հանելուկ՝

Շոգից թև առավ,
Երկինք բարձրացավ,
Դարձավ ձյուն, անձրև,
Կրկին հետ դարձավ:
(Ջուրը)

Աշակերտները գուշակում են հանելուկի պատասխանը:
Առաջադրում եմ հարց.
- Ի±նչ է ջուրը:

«Մտագրոհ» մեթոդով գրի եմ առնում աշակերտների բոլոր հնարավոր պատասխանները.



Հարցերի միջոցով կպարզեմ աշակերտների ունեցած գիտելիքները ջրի մասին. «Ես և շրջակա աշխարհը» առարկայից՝ կստեղծեմ միջառարկայական կապ:

- Ջուրը ի՞նչ վիճակներով է հանդիպում բնության մեջ:
- Ինչի՞ համար են օգտագործում ջուրը:
- Ինչպիսի՞ ջրերի ենք հանդիպում բնության մեջ:
- Որտե՞ղ են լինում աղի ջրերը, քաղցրահամ ջրերը:

Կծանոթացնեմ կոշտ և փափուկ ջրերին, ջրի բաղադրությանը: Կկարևորենք ջրի անհրաժեշտությունը բոլոր կենդանի օրգանիզմների կյանքում:

Իմաստի ընկալում

Կկիրառեմ «Պրիզմա»-յի մեթոդը «Ջուր» մեկնաբառով և դրա ուղղությամբ կկենտրոնացնենք մտքերը



Տրամաբանական կապ կստեղծենք մեկնաբառի և վերջնաբառի միջև՝ ջուրը կյանք է:
Կառաջադրեմ հանելուկ.

Երբ մթնում է՝ հուզվում, թախծում,
Մրմնջում է ու արտասվում,

Ինչն է ջրում դաշտ ու անտառ՝
Լինի գանուն, աշուն, ամառ:
(Անձրևը)

Աշակերտները կգուշակեն հանելուկի պատասխանը և կառաջադրեմ հարց.

-Ինչպե՞ս է առաջանում անձրևը:

Աշակերտները կպատմեն անձրևի առաջացման մասին, որը երկրի վրա թափվում է կաթիլի տեսքով: Այնուհետև կանցկացնեմ մարզադադար:

Կներկայացնեմ նոր դասի վերնագիրը՝ Անահիտ Պարսամյանի «Կաթիլը» և կպարզեմ, թե որ գրական ստեղծագործությունների շարքին է այն դասվում:

Աշակերտները կներկայացնեն, թե ինչպիսի ստեղծագործություն է բանաստեղծությունը:

Լավ կարդացող երկու-երեք աշակերտների կողմից կընթերցվի բանաստեղծությունը: Աշխատանք կտարվի բնագրի շուրջը: Կփորձեն տուն առ տուն բացատրել բանաստեղծության բովանդակությունը, կբացատրեն բանաստեղծության մեջ տեղ գտած բիլ բառի իմաստը, թեև, հոգս բառերի ուղղագրությունը, կգտնեն իսկույն, շողշողալ, իզուր բառերի հոմանիշները: Կպարզաբանենք բանաստեղծության հիմնական միտքը:

Հարց.

- Ի՞նչ է սովորեցնում այս բանաստեղծությունը:

Կլսեմ տարբեր կարծիքներ: Կկարևորենք բարի գործ կատարելու գաղափարը: Կընթերցենք “Իմաստունի խորհուրդները” և կառանձնացնենք բանաստեղծության հիմնական միտքը՝ կաթիլի նման ուրիշներին օգտակար լինելու գաղափարը: Որպես աշխուժացնող դադար կերգենք “Կաթիլներ” երգը:

Կշռադատում

Կվերականգնենք ջրի մասին ասույթներն ու ասացվածքները “Քանդված առածներ” խաղի միջոցով:

Ջուրը	քար կծակի
Ջուրը հարստություն է	խոսքը՝ մեծին
Ջուրը փոքրին	կյանքի հիմքն է
Կաթ-կաթ ջուրը	որից ջուր ես խմում
Մի պղտորիր այն առուն	պետք է խնայել

Անդրադարձ հարցերով կպարզեմ, թե ինչ գիտեին ջրի մասին և ի՞նչ նոր բան իմացան: Կանդրադառնամ “Մտագրոհ” մեթոդին, կպարզաբանենք արտահայտած բոլոր մտքերը ինչ կապ ունեին ջրի հետ: Կհանձնարարեմ տնային աշխատանք սահուն և առոգանության պահպանումով ընթերցել դասը, տեղեկություններ հավաքել մարդու կյանքում և բնության մեջ ջրի դերի մասին և կազմել հնգյակ «Կաթիլ» բառով:

Օրվա դասի պլան

Դասարան՝ 4-րդ

Առարկա՝ մաթեմատիկա

Թեմա՝ Ամփոփիչ և ամրապնդող առաջադրանքներ

Դասի տիպը՝ ամրապնդման դաս

Նպատակը՝

- ամրապնդել «Կոտորակ» թեմայից յուրացրած գիտելիքները,
- ձևավորել մաթեմատիկական խոսքի գործածման կարողությունները՝
- աշակերտներին նախապատրաստելով միջին դպրոցին,
- զարգացնել ինքնուրույն և համագործակցային աշխատանքներ կատարելու կարողությունները,
- զարգացնել գնահատումներ կատարելու հմտությունները,
- ձևավորել շրջապատող աշխարհը հասկանալու և գնահատելու, գեղեցիկը տեսնելու կարողությունը,
- դաստիարակել աշխատասիրություն

Դասի կահավորումը՝ գունավոր թղթից պատրաստված երկրաչափական պատկերներ, թելեր, մետր, մկրատ, ծաղիկներ, թղթից պատրաստված մեղվի շրջանակներ, երեխաների բեմական հագուստ,

Դասին կիրառվող մեթոդներն ու հնարները՝ մտագրոհ, դերախաղ,անավարտ նախադասության լրացում:

Դասի ընթացքը՝

1) տնային աշխատանքի ստուգում (գնահատել 3 աշակերտի)

Աշակերտները գրատախտակին մոտեցան դասագրքով, կատարեցին տնային աշխատանքը: Մյուս աշակերտները գրատախտակին կատարված աշխատանքները համեմատեցին իրենց տետրում կատարված աշխատանքների հետ: Համընկնելու դեպքում աշակերտները մեղվի տզզոց էին հանում, իսկ չհամընկնելու դեպքում՝ ոտքերով դոփում:

2) նոր դասի հաղորդում

<u>խթանում</u> – Զրույցի միջոցով աշակերտներին ներգրավել նոր նյութի հաղորդման մեջ:

Ընտրել կարգախոս, խորհրդանիշ, ծավալել զրույց մեղուների շուրջ:

Դասի կարգախոս ընտրվեց Միությունը ուժ է: Հանելուկի միջոցով աշակերտները գտան նաև կարգախոսին համապատասխանող խորհրդանիշը՝ մեղու: Զրույցի միջոցով քննարկեցին մեղվի և կարգախոսի միջև եղած կապը: Աշակերտները նշեցին, որ մեղվաընտանիքն ուժեղ է իր միասնությամբ. ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունի իր պարտականությունը, որը կատարում է սիրով: Ուսուցիչը նշեց, որ կարգախոսը բնութագրող լավագույն օրինակ է նաև հայ ժողովրդի միասնությունը, որն իր ուժով անառիկ է պահում հայրենի սահմանները:

Մեղուն՝ թվերի աշխարհում! բաժնում աշակերտներն արտահայտեցին իրենց ունեցած տեղեկությունները մեղվի մասին: Ուսուցչի հրահանգով երեխաները խմբավորեցին պատասխանները՝ մեղվին բնութագրող և այլ՝ կիրառելով մտագրոհ մեթոդը: Այնուհետև առաջացած մասերը ներկայացրին կոտորակի տեսքով և գրառեցին:

<u>ֆիզկուլտ դադար</u>

<u>իմաստի ընկալում</u> – խմբային աշխատանքի կատարում

- դասարանը բաժանել խմբերի՝ ըստ ծաղիկների,
- առաջադրանքների հանձնարարում և կատարում:

Դասարանը բաժանվեց 5 խմբի՝ նարգիզ, գնարբուկ, երիցուկ, խատուտիկ և մանուշակ: Խմբի ավագը մայր մեղուն էր: Յուրաքանչյուր խմբին տրվեց առաջադրանք՝ տեսական և գործնական: Աշխատանիքի կատարման համար տրվեց 10 րոպե: Երեխաներն աշխատում էին Մեղվի թռիչք! կոչվող երաժշտության ներքո: Աշխատանքն ավարտելուց հետո իրականացվեց ինքնաստուգում՝ գրատախտակին ամրացված պատասխանների թերթիկի միջոցով: Գնահատումը կատարվեց միավորներով, այնուհետև գրվեց գունավոր թղթից պատրաստված մեղվի վեցանկյուն բջիջների վրա, որոնք էլ փակցվեցին յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փեթակի շրջանակներին: Ամփոփեցին արդյունքը՝ ընտրելով լավագույն խմբին:

<u>կշռադատում</u> – ամփոփել աշխատանքները, կատարել գնահատում (խումբը գնահատում է իրեն և մյուս խմբերին)

- Ինքնուրույն աշխատանքի կատարում – նպատակը՝ վեր հանել թեմային չյուրացված մասերը (ստուգումը և գնահատումը կատարել հաջորդ դասին), Քարտերը կազմված են՝ ըստ աշակերտների ընդունակությունների:
- Տնային աշխատանքի հանձնարարում (վարժություն՝ 999 ա), գ); 997)
- Անդրադարձ:

Աշակերտներին հանձնարարվեց լրացնել անավարտ նախադասությունները՝

- ✓ Ինձ դուր եկավ…
- ✓ Ես դժվարացա…
- ✓ Խմբում ես ներդրեցի…
- ✓ Սովորեցի…

Դասի վերջում խմբերը զեկուցեցին և համտեսեցին իրենց մեղրը:

Օրվա դասի պլան

Առարկան՝ մաթեմատիկա
Դասարան՝ չորրորդ
Դասագիրք՝ Ս.Մկրտչյան, Ա. Իսկանդարյան, Ա. Աբրահամյան, Ռ. Սարգսյան
Դասի թեման՝ «Մաս և ամբողջ»
Դասի տիպը՝ նոր նյութի ուսումնասիրման
Դասի նպատակը՝

- իմանա ամբողջի և դրա մասերի մասին
- կարողանա մասը արտահայտել կոտորակով
- գիտակցել թեմայի կարևորությունը և կիրառելիությունը

Դասի կահավորումը՝ համակարգիչ, պրոեկտոր, դասագիրք, էկրան, A4 ֆորմատի թղթեր, գունավոր մատիտներ:

Դասի ընթացքը՝ խթանման փուլ

Առաջադրում եմ աշակերտներին նախօրոք դասարան բերած խնձորները բաժանել 2, 4 հավասար մասերի, որից հետո առաջադրում եմ հարցեր.

Քանի մասի բաժանեցիք խնձորները (2, 4):

Այնուհետև աշակերտների ուշադրությունը հրավիրում եմ էկրանին, որտեղ բացվում է պատուհան, որում երևում է ամբողջական խնձորը:

Հարց՝ ինչ ենք տեսնում էկրանին և ինչպիսի խնձոր է այն: (մեկ ամբողջ)

I նկարը՝ քանի հավասար մասի է բաժանված խնձորը: (երկու)

Յուրաքանչյուր մասը ամբողջ խնձորի որ մասն է կազմում: (կեսը կամ մեկ երկրորդ մասը)

Կգրենք այն ½

II նկարում քանի հավասար մասերի է բաժանված խնձորը:(չորս)

Ամբողջ խնձորի որ մասն են կազմում յուրաքանչյուր մասը: (մեկ չորրորդ կամ մեկ քառորդ)

Կգրենք՝ ¼:

Ամբողջի և մասի գաղափարը տալուց հետո անցնում եմ իմաստի ընկալման փուլին:

Իմաստի ընկալում՝ էկրանին երևում է շրջան՝ ներկված որոշակի մասերով: Աշակերտները իրենց մոտ կգրեն շրջանների ներկված և չներկված մասերը կոտորակով: Որից հետո էկրանին կերևա ճիշտ պատասխանները:

Կառաջադրեմ խնդիր՝ պատկերված է 8 սմ երկարությամբ 2 հատված: Նշել առաջին հատվածի ½ մասը, երկրորդ հատվածի ¼ մասը: Որոշել այդ մասերի երկարությունները: Հարց

1. Որ մեծությունն է ընդունված որպես ամբողջ: (հատվածի երկարությունը)

2. Իսկ այդ հայտնի է: (8 սմ)

3. Որ մեծությունը պետք է գտնել: (հատվածի ½, ¼ մասերի երկարությունները)

4. Ինչպես գտնենք այն մեծությունը, որը ամբողջի ½-ն է (կամ կեսը) 8:2=4(սմ)

5. Ինչպես գտնենք այն մեծությունը, որը ամբողջի ¼-ն է: 8:4=2(սմ)

Էկրանին կերևա պատասխանները և եզրակացությունը:

Եզրակացություն՝ ամբողջի մասը գտնելու համար, ամբողջին համապատասխանող թիվը բաժանում ենք մասը ներկայացնող թվի վրա:

Առաջադրում եմ օրինակներ, որոնք կերևան էկրանին:

Աշակերտների պատասխաններից հետո, էկրանին կերևա ճիշտ պատասխանները:

1.Որքան է 24 թվի 1/6 մասը

24:3=4

2.Որքան է օրվա 1/3 մասը:

24:3=8(ժ)

3.Որքան է մետրի 1/5 մասը:

100:5=20(սմ)

Դադարի պահ՝ առաջադրում եմ հետաքրքրաշարժ խնդիր. էկրանին երևում է որոշակի դասավորվածությամբ խնձորներ: Տանել 3 ուղիղ այնպես, որ յուրաքանչյուր խնձոր գտնվի մեկ մասում: Աշակերտները կփորձեն կատարել առաջադրանքը, որից հետո էկրանին կերևա ճիշտ պատասխանը:

Առաջադրում եմ ևս 2 խնդիր.

1.Պատկերել 2սմ և 3սմ կողմերով ուղղանկյուն և նշել նրա քառորդ մասը:

2.Պատկերել 2սմ շառավղով շրջան և նշել նրա կեսը: Աշակերտները տեղում ինքնուրույն կփորձեն կատարել առաջադրանքները: Ստուգելուց հետո էկրանին կերևա ճիշտ պատասխանները:

Բանավոր կկատարենք դասագրքի 843 առաջադրանքը՝ պատկերներից յուրաքանչյուրի նշված մասը արտահայտել թվերով:

Կշռադատման փուլ՝ անդրադարձ հարցերով ամփոփել դասը.

1.Մաթեմատիկան ինչ հասկացությունների հետ մենք ծանոթացանք այս դասի ընթացքում: (ամբողջի և մասի)

2.Ինչպես են գտնում ամբողջի մասերը: Լսել պատասխանները:

Տնային աշխատանք՝ առաջադրանք 847:

1կգ= 1000գ 1գ= 1/1000գ

1մ =100սմ 1սմ= 1/100մ

1օր= 24ժ 1ժ =1/24օր մեծություններից կատարել տնային աշխատանքը: Վերջում կատարում եմ գնահատում ակտիվ աշակերտներին և ընդհանրացում, որ կյանքում մենք հաճախ ենք առնչվում մասի և ամբողջի հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սովորողների ինքնուրույնության զարգացումը կատարվում է աստիճանաբար, նրանք դաստիարակվում են դասից դաս, դասարանից դասարան:

Հենվելով մանկավարժական գրականության ուսումնասիրության, նաև իմ մանկավարժական գործունեության ընթացքում ձեռք բերված փորձի վրա, կարող եմ ենթադրել, որ սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացման համար կարևոր է, որ երեխաների համար ստեղծվեն նպաստավոր պայմաններ սովորելու համար, որպեսզի երեխան ինքնուրույն գտնի ուսումնառության ընթացքում հանդիպած դժվարությունների հաղթահարման ուղիները:

Փորձը ցույց է տվել, որ այն աշակերտները, որոնց մեջ ձևավորվել է ինքնուրույնության հակումները, որպես կանոն, բավականին մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ուսման հանդեպ, ձգտում են նոր գիտելիքներ ստանալ:

Այս ամենի մեջ շատ կարևոր նշանակություն ունի մանկավարժի դերը:Նրա խնդիրն է ստեղծել բարենպաստ մթնոլորտ, որի ընթացքում սովորողները շահագրգռված կլինեն ուսումնական գործընթացով և կձգտեն ինքնուրույնության:

Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել տարբերակված կերպով՝ յուրաքանչյուր աշակերտի կարողություններին համապատասխան:

Տարրական դասարաններում ուսուցիչը ուսումնադաստիարակչական բնագավառում պետք է.

- Խրախուսի և ոգևորի սովորողին,
- Սիրի իր սաներին և իր կատարած աշխատանքը,
- Ուսուցման ակտիվության շնորհիվ փորձի բարձր պահել սովորողների աշխատունակությունը,
- Անհատական մոտեցում ցուցաբերի յուրաքանչյուր սովորողի նկատմամբ,
- Ուսուցման շրջանակներում կիրառի ուսուցման ժամանակակից մեթոդներ,
- Առարկայի ուսուցմանը զուգահեռ աշակերտների մեջ ձևավորի հոգեկան-բարոյական արժեքներ,ինքնուրույնություն,ստեղծագործական ունակություններ,
- Ոգևորի ածակերտի նախաձեռնողական քայլերն ու ստեղծագործական ունակությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Անձի ինքնիրացման հիմնախնդիրը:Ուսումնական ձեռնարկ/Վ. Ռ. Պապոյան,Է. Ա. Ս. Գալստյան և ուրիշներ.-Եր.:ԵՊՀ հր. 2011,102 էջ:
2. Հոգեդիագնոստիկա;ուսումնական ձեռնարկ/ԵՊՀ;Կազմ.՝ Ռ. Ստեփանյան, Ա. Գալստյան.-Եր.;ԵՊՀ հրատ. 2012, 210 էջ:
3. Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք,2012, «Ժամանակակից ուսուցչի ներկայացվող պահանջները», 13 էջ:
4. Կ. Թորոսյան,Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, « Մեթոդական աշխատանքը դպրոցում », ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն,2014 թ.:
5. «Մասնագիտական ինքնորոշման և կայացման հոգեբանական ուղղորդումը կրթական համակարգում», նյութերի ժողովածու, հեղ. Վ. Պապոյան, Ա. Գալստյան, Ե. Մուրադյան,Դ. Սարգսյան, Եր. ԵՊՀ, հրատ. 2015,76 էջ:
6. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան. 2013,13 էջ:
7. http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/Arzumanyan.pdf. Ս. Արզումանյան, Հոգեբանություն, Երևան,2003, 65 էջ:
8. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 ՀՀ հանրակթության մասին օրենք;հոդված 27, կետ 10:
9. https://lib.armedu.am/category/56
10. https://slovarozhegova.ru/
11. https://library.fes.de/pdf-files/buenos/georgien/16023.pdf. Ուսումնական արդյունավետ հնարներ, Երևան, 2020, 23 էջ: